


«ՄԱՐԴԻԿ ՀԱՅԻ ՀԱՐՅ ԷԻՆ ԼՈՒԾՈՒՄ»



*Հարցազրույց «Թրանսփարենսի ինթերնեյշնլ» կազմակերպության
ղեկավար Ամայա Կոստանյանի հետ*

«Այսօր ես իմացա, որ միջազգային դիտորդները փորձել մի փոքր «խմբագրել» իրենց հայտարարությունը՝ կոչ անելով իշխանություններին փոխել մթնոլորտը եւ վարքագիծը ընտրությունների ժամանակ: Մինչդեռ պետք է ոչ միայն ընտրատարածքներում շատ բան փոխվի, այլ նաեւ ընտրատարածքներից դուրս: Եթե դրսում կուտակված է կրիմինալ, դա արդեն ՀՀ ընտրական օրենսգրքի խախտում է»:

2009-06-05

Ի՞նչ տեսաք այս ընտրությունների ժամանակ, որ չէիք տեսել մինչեւ այժմ տեղի ունեցած ընտրական գործընթացներում:

Մեզ համար նորություն չէին ոչ լցոնումները, ոչ ճնշումները, ոչ գրանցամատյան գողանալը, բայց պետք է խոստովանեմ, որ ցնցված եմ ոչ միայն ես, այլեւ դիտորդություն իրականացրած մյուս տեղական կազմակերպությունների ներկայացուցիչները: Մենք ընտրել էինք 8-րդ ընտրատարածքը, որովհետեւ այնտեղ «Ժառանգությունը» հանձնաժողովի անդամ չունեւ, եւ կարծում էինք, որ վերահսկելու ավելի մեծ անհրաժեշտություն կա: Ենթադրում էինք, որ անցած ընտրությունների նման վատ է լինելու, բայց չէինք սպասում, որ եղածից այսքան վատ կլինի: Մեր տեսածը ցինիզմ էր ու ապօրինություն: Քվեաթերթիկ լցնելիս, ձայների շուրջ առեւտուր անելիս մարդիկ չէին վախենում ոչ մի բանից ու անգամ անկեղծ ասում էին, որ հացի հարց են լուծում. իրենց հանձնարարել են եւ վերջ:

Ովքե՞ր էին ընտրախախտումներ կատարողները:

Հիմնականում հանձնաժողովի նախագահներ եւ անդամներ: Ասենք, քվեները հաշվելիս ասում են. «Մենք չենք պայմանավորվել այս կամ այն թվի շուրջ», եւ դա անում են բացահայտ, առանց թաքցնելու: Ընտրական ապօրինությունները Հայաստանում արդեն ինստիտուցիոնալացվել են:

Պարզ է, որ բացահայտ խախտում անողները վստահ են եղել, որ իրենց թիկունքն ուժեղ է, այսուհանդերձ, երեւո՞ւմ էր, թե որ ուժի ներկայացուցիչներն են հատկապես ակտիվ:

Իհարկե: Դեպքերը, երբ դիտորդը ճշտել է խախտում կատարողի անձը, մեր վերջնական զեկույցում կնշվեն անպայման: Հիմնական խախտումներն էլ, նորություն չէ, արել են ՀՀԿ-ն եւ ԲՀԿ-ն, բայց խնդիրը միայն նրանց անբարոյական վարքագիծը չէր: Ցավոք, ընդդիմության ներկայացուցիչներն ահաբեկված էին, ու հիմա մտածում եմ, որ եթե անգամ «Ժառանգության» ներկայացուցիչը լիներ հանձնաժողովում, հազիվ թե նրան հաջողվեր ինչ-որ բան անել: Մենք ակնկալում էինք, որ ընդդիմությունը շատ ավելի ակտիվորեն կպայքարի այդ ընտրատեղամասում, բայց իրականությունը այլ բան էր թելադրում:

Իսկ դիտորդները ընտրախախտումները կանխել չէ՞ին կարող:

Դիտորդի լիազորությունները սահմանափակ են: Նա չի կարող միջամտել գործընթացին: Վստահված անդամը կարող է պահանջել արձանագրություն, հանձնաժողովի անդամը կարող է չստորագրել արձանագրությունը, կանգնեցնել պրոցեսը, իսկ դիտորդը կարող է միայն դիտել եւ արձանագրել: Մյուս կողմից, սակայն, եթե ընտրատեղամասի ներսում եւ դուրսը քրեական դեմքերի 60-հոգանոց խմբեր են, որեւէ բան անելը անիմաստ է դառնում: Ի վերջո, մենք կռիվ տալու իրավունք չունեինք: մենք ընդամենը մեկ ընտրատարածքի 30 ընտրատեղամասում դիտորդություն ենք իրականացրել, եւ ես ինքս դիտորդներից յուրաքանչյուրի կյանքի համար մեծ պատասխանատվություն եմ զգացել, որովհետեւ եղել են դեպքեր, երբ մեր դիտորդին ստիպողաբար տեղամասից դուրս են հանել, սպառնացել են, փորձել են կաշառել:

Բայց այսքանով հանդերձ՝ իշխանությունները հայտարարում են, որ ընտրությունները համապատասխանում էին եվրոպական չափանիշներին:

Ինչո՞ւ միայն իշխանությունները, նաեւ միջազգային դիտորդները: Այսօր ես իմացա, որ նրանք փորձել մի փոքր փոխել իրենց հայտարարությունը՝ կոչ անելով իշխանություններին փոխել մթնոլորտը եւ վարքագիծը ընտրատեղամասերում եւ նշելով, որ դա էլ է շատ կարեւոր, բայց ոչ միայն ընտրատեղամասում պետք է շատ բան փոխվի, այլ նաեւ ընտրատեղամասից դուրս: Եթե դրսում կուտակված է կրիմինալ, դա արդեն ոչ թե մթնոլորտի խնդիր է, այլ ՀՀ օրենսգրքի խախտում: Ինչո՞ւ են գալիս դիտարկելու. որպեսզի գործընթացի ժամանակ չխախտվեն ժողովրդավարական չափանիշները: Եթե գալիս են եւ կրկնակի ստանդարտներ կիրառում, իմաստ ունի՞ դա անելը: Պարզ է, որ այս ամենը պայմանավորված է աշխարհաքաղաքական շահերով, Ղարաբաղի խնդրի կարգավորմամբ, ու չենք ասում, թե սրանք կարեւոր չեն, բայց տպավորություն է, թե ոչ մեկին չի հետաքրքրում, թե ինչ է կատարվում Հայաստանի ներքին կյանքում, եւ ուր կարող են տանել Հայաստանը այս կարգի խայտառակ ընտրությունները:

Ինչո՞ւ ԵՆԽՎ դիտորդները, Ձեր կարծիքով, փորձեցին փոխել իրենց նախնական եզրակացությունը:

Հավաքանար այդ ասուլիսի ժամանակ լրագրողների պահվածքն է դեր ունեցել: Գուցե նաեւ հասկանում են, որ եթե ինչ-որ ընտրատեղասի դեպքում քրեական գործ է հարուցվում, եթե մամուլում կոնկրետ տեղամասերի անուններ է նշվում, որտեղ բացահայտ խախտումներ են եղել, ուրեմն, պետք էր ինչ-որ ձեւով իրենց ասածի տակից դուրս գային:

Ձեր արձանագրած խախտումներն ու գնահատականները ի՞նչ հետեւանքներ կարող են ունենալ:

Առնվազն 8-րդ ընտրատարածքի քվեարկության արդյունքները հնարավոր է անվավեր ճանաչել: Եթե նույնիսկ այդպես լինի, այսպիսի խայտառակությունից հետո իշխանությունները կարող են ընդամենը մի քանի հոգու պատժել, ասել, որ սա ամբողջ քաղաքի համար արտառոց դեպք է ու հարցը փակել: Ուղղակի նման խայտառակությունից հետո ես էլ չեմ հավատում, թե այս երկրում հնարավոր են մաքուր ընտրություններ ընդհանրապես: Ու սա այն դեպքն է, երբ անիմաստ է խոսել որեւէ մի քաղաքական ուժի հաղթանակի կամ պարտության մասին: Գուցե արդեն ձեւական է հնչում, բայց մենք բոլորս ենք պարտված: